

ԳԻՏԵ՛Կ ԹԷ ...

Երուսաղեմի Հայ Գաղութը Երեք Բաներու Մէջ Առաջին Տեղը Կը գրաւէ

Ա.- Անծանօթ Ձինտորի Յուշարձան



Ձ. (6-րդ) դարուն Սրբ. Պողիկտոս վանքին մէջ կառուցուած էր առաջին անծանօթ զինտորի յուշարձան Հայկական խճանկար յատակը (մոզայիք), Երուսաղեմի Դամասկոս Դուռի հիւսիսային կողմը, Մուսարաթ թաղամասին մէջ։ Խճանկարէ յատակը գտնուած է 1894-ին։ Հայկական խճանկարի արձանագրութիւնն է հետեւեալը.

«ՎԱՍՆ ՅԻՇԱՏԱԿԻ ԵՒ ՓՐԿՈՒԹԵԱՆ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԶՈՐՈՑ ԶԱՆՈՒԱՆՍ ՏԵՐ ԳԻՏԷ»։ Սոյն խճանկարը հաւանաբար շինուած ըլլայ 550 թուականին Ք.Ե.։ Անոր չափերն են 2.9X3 մետր։

(Տես՝ «Հայոց Պատմութիւն», Սիմոն Սիմոնեան, Ե. Տարի, Պէյրութ, 1972, էջ 93. նաեւ՝ "Mosaics of the Holy Land", by Meir Ben Dov and Yoel Rappel, Israel, 1987, p. 107):

Բ.- Տպագրութիւն

Երուսաղեմի Հայոց Պատրիարքարանի Սրբոց Յակոբեանց Տպարանը հիմնուած է 1833-ին. անիկա առաջինն է Ս. Քաղաքին մէջ։ Հրէից տպարանը հիմնուած է հայկականէն ութը տարի ետք։ ("Jerusalem - 3000", copyright, 1995-96, by Y. Menachem, p. 8)

Գ.- Լուսանկարչութիւն

1850-ական թուականներուն Եսայի Վրդ. Կարապետեան (ապա Պատրիարք Հայ Երուսաղեմի՝ Եսայի Դ. Կարապետեան, Թալասցի, Կեսարիա, (1865-1885), եղած է



Երուսաղեմի և Պաղեստինի առաջին տեղական լուսանկարիչը։ Ան կը վաւերագրէ հայ համայնքին գործունէութիւնը լուսանկարներով ու այսպիսով կը դառնայ առաջին անձը Երուսաղեմի մէջ, որ կ'ունենայ իր անձնական լուսանկարչական աշխատանոցը, ուր ան լուսանկարչութիւն կը սորվեցնէր։

Իր լաւագոյն աշակերտները եղած են երկու այլ հայեր՝ Գէորգ և Կարապետ Գրիգորեանները։

1898-ին Գերմանիոյ թագաւոր-Կայսեր Ուիլիլմ Բ.ի այցելութենէն ետք, Գրիգորեան կը ստանայ «Փրուսիայի Պալատի Թագաւորական Լուսանկարիչ» տիտղոսը։

(Տես՝ "Profile of a Changing City", by Eyal Onne & Dror Wahrman, Jerusalem, 1985, pp. 7, 47, 56, 64, 65):

Պատրաստեց՝
Բարսեղ Վրդ. Գալէմտէրեան